«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Մարինե Գրիգորյան

Մանկապարտեզ՝ « h 3 » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն..... 3

1. Ընտանիք -մանկապարտեզ համագործակցության ժամանակակից մոտեցումները..... 5

2. Ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի ուղղությունները 9

Եզրակացություններ.....18

Գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Աճող սերնդի դաստիարակության և կրթության հաջողությունները պայմանավորված են բոլոր սոցիալական ինստիտուտների միջև հաստատվող փոխվստահելի և փոխպատասխանատու համագործակցությամբ: Համագործակցության կազմակերպ-ման և համակարգման բարդ գործառույթը պատկանում է մանկապարտեզի մանկավարժական անձնակազմին ՝ տնօրենի գլխավորությամբ: Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից:

Նախադպրոցական մանկավարժության արդի խնդիրներից է ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության խթանումը: Սակայն, այսօր առկա են որոշակի հակասություններ, որոնք խաթարում են այդ համագործակցության ընթացքը, մասնավորապես.

- ծնողական կրթության կազմակերպման գործընթաց չի կիրառվում կամ կիրառվում է մասամբ,
- այդ ուղղությամբ տարվում է ոչ համարժեք մանկավարժական աշխատանք,
- առկա են ծնողների հետ համագործակցության բազմաթիվ մեթոդներ, շփման ձևեր, սակայն չունեն կիրառություն:

Նշված հակասությունների շտկման անհրաժեշտությամբ է պայմանավորված տվյալ թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակը: Հիմնավորելով ընտանիքի և մանկապարտեզի ակտիվ համագործակցությունը, մշակել ընտանիքի և նախադպրոցական կրթական հաստատության համագործակցության միջոցներ, գտնել ուղիներ:

Հետազոտության խնդիրները:

1. Ներկայացնել ընտանիքի և մանկապարտեզի միջև գոյություն ունեցող համագործակցության զարգացումը
2. Ուսումնասիրել և գնահատել ընտանիքի և մանկապարտեզի միջև գոյություն ունեցող համագործակցության ձևերը,
3. Վերլուծել ծնողների հետ մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկությունները նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին համապատասխան:

1. ԸՆՏԱՆԻՔ -ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Բայց ահա 18-րդ դարում ընտանեկան դաստիարակության առնչությամբ հանդես եկան երեք ուղղություններ[1]: *Առաջին* ուղղության կարկառուն ներկայացուցիչը Հ. Պեստալոցին էր: Նա հայրական տունը համարում էր բնական դաստիարակության հիմքը, գտնում էր, որ մարդկանց ընտանեկան հարաբերություններն առավել բնական հարաբերություններ են և դաստիարակությունը՝ նույնպես: Սակայն նա չէր ժխտում ուսումնական հաստատությունների դերը: *Երկրորդ* ուղղության ներկայացուցիչը անգլիացի ուտոպիստ սոցիալիստ Ռ. Օուենն էր: Նա բացասական կարծիք ուներ ընտանեկան դաստիարակության մասին: Այն համոզմանն էր, որ ընտանեկան հարաբերություն-ները, երեսպաշտությունը բարոյապես այլանդակում է մարդկանց: Օուենն ընտանիքը համարում էր էգոիզմի և երեսպաշտության բույն: Նա կողմ էր դաստիարակության պետական, համակարգին, որի միջոցով, ասում էր Օուենը, բոլոր երեխաները կստանան միատեսակ կրթություն և դաստիարակություն: Նա այն կարծիքին էր, որ համակողմանի դաստիարակություն կարելի է ստանալ միայն պետական, հասարակական ուսումնական հաստատությունների ընձեռած հնարա-վորություններով:

Նոր ժամանակներում մեծ մտածողները, մանկավարժներն ու հոգեբանները պահանջեցին դաստիարակության բնագավառում ապահովել ընտանեկան, պետական և հասարակական ուսումնական հաստատությունների դաստիարակութ-յան կապը: Եվ ահա հանդես եկավ նաև *երրորդ* ուղղությունը, որի ներկայացուցիչները միակարծիք են և իրար չեն հակադրվում: Ա. Ս. Մակարենկոն ասում էր. Ես գրեթե չեմ լսել , որ ծնողներն ասեն. «Մենք պետք է դաստիարակենք, ինչու՞ է մանկապարտեզը խանգարում»: Եվ չեմ լսել, որ մանկավարժն ասի «Մանկապարտեզը պետք է դաստիարակի, ինչու՞ է ընտանիքը խանգարում»:

[1] Методика воспитательной работы. Под редакцией В.А. Сластенина ,- М., 2002. էջ 18

Ուրեմն եզրակացությունն այն է, որ երեխաների դաստիարակությունն իրականացվում է մանկապարտեզի և ընտանիքի համատեղ ջանքերով: Այնուամենայնիվ, ընտանիքի՝ երեխաների դաստիարակության գործում ունեցած կարևոր դերն, անժխտելի է:

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման համար գոյություն ունի երկու կարևոր ինստիտուցիոնալ կառույց՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Ընտանիքը երեխայի համար հասարակական փորձի աղբյուր է: Հետևաբար՝ անհրաժեշտ է և կարևոր մանկապարտեզի ու ընտանիքի արդյունավետ համագործակցությունը: Երեխաների առողջության պահպանումը անհնար է պատկերացնել առանց ընտանիքի: Ընտանիքում են դրվում երեխայի վաղ զարգացման հիմքերը: Ծնողներն են, որ առաջին անգամ երեխային սովորեցնում են կյանքի այբուբենը, ձևավորում նրանց աշխարհընկալումը, բնավորության գծերը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության փոփոխությունը հանգեցնում է երեխայի դաստիարակության գործում ընտանիքի դրական դերի ընդունմանը[2]: Հասարակական նախադպրոցական կրթությունն աջակցում է ընտանիքին՝ իրականացնելու համակարգված երեխայակենտրոն կրթություն:

Նախադպրոցական կրթության համակարգի բարելավման ներկա գործընթացի հիմքում ընկած են մանկավարժական աշխատանքի հումանիզացումը և երեխայի անհատական զարգացման համար նպաստավոր մթնոլորտի ստեղծումը: Նախադպրոցական հաաստատությունների մանկավարժներն ընտանիքների հետ համագործակցելիս նկատել են, որ այսօր որոշ ծնողների մոտ մանկավարժական ժամանակակից մոտեցումների որոշակի պակաս կա: Մեր պատկերացմամբ՝ ծնողների հետ համապատասխան աշխատանք տանող մանկավարժները չպետք է անընդհատ մեղավորներ փնտրեն: Այդ գործելակերպը կարող է տանել փակուղի: Արդյունավետ համագործակցություն կկայանա այն դեպքում, եթե կողմերն ընդունեն և վստահեն միմյանց: Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի սերտ համագործակցությունը նախադպրոցական կրթական հաստատությունների հետ[3]:

---

[2] Դաստիարակչական աշխատանքը դպրոցում, աշխ. խմբ. ղեկ. Մ. Դավթյան, Երևան, 2008 էջ 35,36

[3] Методика воспитательной работы. Под редакцией В.А. Сластенина ,- М., 2002. էջ 91

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.

- նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու,
- նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու:

Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին: Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները: Մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ դիրքորոշումը նպաստում է երեխաների դաստիարակությանը համակցված,փոխպայմանավորված և փոխպատասխանատու գործողությունների միջոցով[4]:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային և կրկնապատկում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը: Նրանք հաճույքով և գերագույն հարգանքով են արձանագրում ծնողների մանկապարտեզի աշխատանքներին ակտիվ մասնակցության փաստը և հպարտանում են ծնողներով: Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը: Մանկապարտեզի դեպի ներս բաց լինելու սկզբունքը ենթադրում է մանկապարտեզի մանկավարժական գործընթացին նպաստող ներխուժող յուրաքանչյուր ներգործության ընկալում, ընդունում և կիրառում:

Համագործակցության *երկրորդ* սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս լինելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պատրաստ պետք է լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ: Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը տարածքի

[4] Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն, Երևան, 2005թ.էջ 47

դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցների, մանկական ակումբների հետ: Ցանկալի է և չափազանց արդյունավետ մանկապարտեզի փոխադարձ կապը մշակութային հաստատությունների հետ /գրադարաններ, թատրոններ, թանգարաններ/: Կենսական անհրաժեշտություն է և ժամանակի պահանջ մանկապարտեզի համայնքի վարչական միավորների հետ փոխադարձ կապի հաստատումը:

2. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամենաավանդական ձևը մանկավարժի պարբերական այցելություններն երեխաների ընտանիքներ: Մանկավարժի հաճախակի այցելությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու երեխային տան պայմաններում, ծանոթանալու ընտանիքի բոլոր անդամների ն և կենսական պայմաններին: Ավանդական ձևերից են ծնողական ժողովները, բաց դռների օրը, կոնսուլտացիաները և հատուկ կազմակերպվող գիտական կոնֆերանսները ծնողներին հուզող թեմաների շուրջ: Փոխադարձ կապի նշված ձևերն առաջին հերթին նպաստում են մանկավարժական գիտելիքների փոխանցմանը և տարածմանը ծնողական միջավայրում, նրանց մանկավարժական մշակույթի բարձրացմանը:

Երիտասարդ ծնողների հետ կազմակերպվում են նաև սեմինար – պրակտիկումներ: Բավականին արդյունավետ են նաև համատեղ միջոցառումները, որոնք կարող են տարբեր նպատակների ծառայել: Օրինակ, տիկնիկային ներկայացման համատեղ դիտումն քննարկումը, որը ճանաչողական բնույթի է և հիմնականում նպաստում է միացյալ ուժերով ներկայացման բովանդակության վերլուծությանը: Համատող տոնակատարություններն ուղղված են երեխայի հուզական և սոցիալական փորձի հարստացմանը: Բանակի տոնին նվիրված հայրիկների հետ համատեղ միջոցառումը նպաստում է հայրիկների ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի աշխատանքներին[5]:

Նախադպրոցական մանկավարժությունն առաջարկում է նաև համագործակցության ժամանակակից եղանակներ: Այսօր չափազանց կարևորվում է մանկապարտեզում ծնողական անկյան ստեղծումը, որը նախատեսվում է որպես ծնողների՝ մանկավարժի և միմյանց հետ հանդիպման վայր: Ծնողական անկյունը նաև ժամանցի, մեկ գավաթ սուրճ խմելու վայր է, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ազատ և անկաշկանդ մթնոլորտում պարզապես զրուցելու, հարցեր

[5] Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն, Երևան, 2005թ.էջ 47

քննարկելու համար: Համագործակցության հետաքրքիր եղանակ է ինտելեկտուալ խաղը, որին մասնակցում են և ծնողները: Նրանք կարող են հանդես գալ հուշողների խմբի, ժյուրիի կամ մասնակիցների դերում: Ինտելեկտուալ խաղի տեսակ էուրախների և հնարամիտների ակումբի կազմակերպումը, որին մասնակից են դառնում ծնողները: Համագործակցության արդյունավետ ձև է ծնողների հետ համատեղ կազմակերպվող սպորտային կամ էկոլոգիական միջոցառումները և խաղերը: Վերջին տարիներին առանձնահատուկ կարևորվում է երկարատև նպատակային համագործակցության կազմակերպումը բավական ժամանակ պահանջող հանձնարարությունների կամ պրոբլեմային իրադրությունների առաջարկման եղանակով: Հանձնարարությունները կարող են լինել երկարաժամկետ համատեղ դիտարկումներ, փորձարկումներ, հետազոտական ուսումնասիկրություններ և այլն: Օրինակ, երեխաներին իրենց ծնողների հետ միասին հանձնարարվում է մարտ ամսվա ընթացքում հետևել եղանակային փոփոխություններին և գրանցել ընթացքը: Բնականաբար, երեխաները հետևում են և նկարագրում, իսկ ծնողները՝արձանագրում են: Մի ամիս հետո կարելի է փոխվել դերերով՝ ծնողների նկարագրությամբ երեխաները նկարում են եղանակային որևէ դրսևորում և նշում, թե ինչպիսի եղանակ է իրենց բնորոշ՝ արևոտ, անձրևոտ, մռայլ թե պայծառ:

Դաստիարակի կողմից մանկապարտեզի ու ծնողների միջև համագործակցության կազմակերպման կարևոր ձևերից է հանդիսանում ծնողական ժողովների կազմակերպումն ու իրականացումն:

Ծնողական ժողովը կարող է ունենալ հետևյալ կառուցվածքը.

1. Զրույց երեխաների առանձնահատկությունների, նախասիրությունների, հետաքրքրությունների շուրջ (նպատակը՝ հստակեցնել սաների անհատական պահանջները՝ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման համար, նպաստել սաների զարգացմանը):

2. Ծնողների ակնկալիքների հստակեցում (նպատակը՝ օգնել դաստիարակին՝ դաստիարակչական և կրթական գործընթացն առավել նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպելու համար):

3. Կազմակերպչական հարցեր:

4. Սաների առաջադիմության ամփոփում:

5. Զրույց-քննարկում՝ տվյալ տարիքային խմբի սաների ընդհանուր հոգեբանական առանձնահատկությունների և դրանք հաշվի առնելով՝ տանը և մանկապարտեզում դաստիարակության արդյունավետ ռազմավարություն ընտրելու շուրջ: Դաստիարակը կարող է նաև մասնագետ հոգեբանի հրավիրել՝ ծնողների հարցերին պատասխանելու համար:

6. Զրույց-քննարկում՝ առողջ ապրելակերպի խնդիրների շուրջ (դաստիարկը կարող է մասնագետ բժիշկ հրավիրել): Զրույցի թեման՝ սանի մոտ առողջ ապրելակերպի վարքագծի խթանումը տանը և մանկապարտեզում (սեռական դաստիարակություն, անձնական հիգիենայի կանոններ, ժամանակի ռացիոնալ տնօրինում)[6]:

Ծնողական ժողովները կարող են ունենալ նաև այլ կառուցվածք ու բովանդակություն, բայց կարևոր նշանակություն ունի ծնողական ժողովների ընթացքում ուշադրություն դարձնել սաների մոտ ի հայտ եկած թերություններին ու փորձել դրանց համար գտնել լուծման ուղղիներ:

Ծնողների հետ անցկացրեցինք թեստային աշխատանք, թե ինչպես անենք, որ մանկապարտեզում ավելի բարձրացվի երեխաների գրական խոսքի որակը:

Արդյունքը վերլուծեցինք և հասկացանք որ անհրաժեշտ է և տանը և մանկապարտեզում հետևել երեխաների գրական խոսքին և օրինակ ծառայել նրանց:

Անցկացրեցինք նաև զրույցի թեման՝ սանի մոտ առողջ ապրելակերպի վարքագծի խթանումը տանը:

Նշվածներից կարող ենք անել այն եզրակացությունը, որ սովորողների ներդաշնակ ու բազմակողմանի զարգացման համար կարևոր դերակատարություն ունեն ինչպես ուսուցիչները, այնպես էլ ծնողները և ակտիվ ու բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորումը բարդ, երկարատև ու շարունակական գործընթաց է:

---

[6] Դաստիարակչական աշխատանքը դպրոցում, աշխ. խմբ. ղեկ. Մ. Դավթյան, էջ 1-146, Երևան, 2008, էջ 54-55

Գոյություն ունեն ընտանիքի հետ հաղորդակցման պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ձևեր: Տարբեր ընտանիքների կարիքներ կարող են լավագույնս բավարարվել հաղորդակցման տարբեր ձևերի միջոցով:

Ոչ պաշտոնական շփման ձևեր

Երեխաներին մանկապարտեզ բերելը և տանելը

Աշխատող ծնողները հաճախ չեն ունենում երեխաներին տրամադրելու բավականաչափ ժամանակ: Նման դեպքերում տան և մանկապարտեզի միջև անհրաժեշտ հաղորդակցման հաստատումը հնարավոր է դառնում բնական, ոչ պաշտոնական առիթների օգտագործման շնորհիվ:

Օրինակ՝ շատ դաստիարակներ առիթ են ստեղծում զրուցելու ծնողների հետ առավոտյան, երբ երեխաներին բերում են մանկապարտեզ, և օրվա վերջում, երբ նրանց տանում են տուն: Սրանք հարմար առիթներ են օրվա անցուդարձի մասին խոսելու, ընտանիքի անդամներին երեխաների հաջողությունների ու ձեռքբերումների մասին պատմելու, նրանց գալիք ժողովների կամ միջոցառումների մասին հիշեցնելու համար: Այդ ժամանակ ընտանիքի անդամները հնարավորություն են ունենում զրուցելու մյուս ծնողների հետ, մանկավարժական կազմին հարցեր տալու, հանդիպման մասին պայմանավորվելու, իրենց երեխաների հետ խաղալու կամ մի խումբ երեխաների համար կարճ պատմվածք ընթերցելու: Այդ ժամանակ այնքան էլ նպատակահարմար չէ քննարկել ծառացած խնդիրները կամ մտահոգությունները, քանի որ երեխաները ներկա են: Նման հարցեր շոշոփելու համար հարկ է առանձին ժամանակ տրամադրել:

Որպեսզի ծնողները չսահմանափակվեն սոսկ երեխային մանկապարտեզի դռանը թողնելով, պետք է սահմանվի և կիրառվի այն կարգը, ըստ որի՝ ծնողները երեխաներին պետք է ուղեկցեն դասասենյակ և օգնեն նրանց՝ պատրաստվելու ուսումնական օրվան:

Երկտողներ և նմուշների թերթիկներ[7]

Երեխաների հետ տուն ուղարկվող հակիրճ, ոչ պաշտոնական երկտողը նպաստում է ընտանիքի և դաստիարակի միջև հաղորդակցման հաստատմանը:

[7] Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008 էջ 114-120

Նման երկտողները պետք է անդրադառնան երեխայի հերթական հաջողությանը, հմտության ձեռքբերմանը կամ վարքագծին: Դրանք կարող են արտահայտել նաև երախտիքի խոսքեր՝ ծնողի կողմից ծրագրին որևէ կերպ աջակցելու կապակցությամբ: Ճիշտ կլինի խրախուսել ծնողներին՝ պատասխան երկտողներ հղելու մանկավարժներին: Սա առանձնապես արդյունավետ գործելակերպ է, երբ մանկավարժներն աշխատում են երեղայի հետ կապված որոշակի խնդրի վրա, իսկ ընտանիքը դրան աջակցում է տա ն պայմաններում:

Ցուցատախտակներ

Ցուցատախտակները ընտանիքների հետ հաղորդակցվելու մեկ այլ եղանակ են ներկայացնում: Դրանց վրա փակցված ինֆորմացիան կարող է ուղղակիորեն հղված լինել ծշնողներին, ներառել գալիք ժողովների և ծնողական հանդիպումների մասին հիշեցումներ, թռուցիկներ երեխայի զարգացման, սնվելու կամ այլ կարևոր հարցերի վերաբերյալ: Ցուցատախտակները պարզաբանում են նաև այն գործունեությունը, որը երեխաներն իրականացնում են կրթարանում: Այստեղ կարելի է տեսնել երեխաների ստեղծագործությունները, կատարած ուղևորությունները նկարագրող ակնարկները, երեխաների ընտանիքների անդամների լուսանկարները: Օրվա դասացուցակը, արձանագրման թերթիկները ևս կարելի է տեղադրել ցուցատախտակների վրա: Ցանկալի է, որ ցուցատախտակները պարբերաբար թարմացվեն և աչքի ընկնեն պայծառ գույներով և ոճական հետաքրքիր լուծումներով: Եթե դրանք հնացած են և անշուք, ապա ընտանիքի անդամները չեն էլ նկատի: Ցուցատախտակի փոփոխումը պետք է հաճելի պարտականություն դառնա մանկավարժական կազմի համար: Ընտանիքները նույնպես կարող են մասնակցել ցուցատախտակների պատրաստմանը: Իսկական հաջողություն է, երբ ցուցատախտակն արտացոլում է խմբասենյակի մթնոլորտն ու յուրահատկությունները:

Պաշտոնական շփման ձևեր

Ժամանակ առ ժամանակ ցանկալի է հաղորդակցվել ընտանիքների հետ՝ պաշտոնական, գրաֆիկով նախատեսված հանդիպումների միջոցով[8]:

---

[8] Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008 էջ 114-120

Տնային այցեր

Երեխաներին և նրանց ընտանիքներին այցելությունները ընդունված են նախադպրոցական բազում ծրագրերում: Որպես կանոն՝ դրանք կատարվում են տարեկան երկու անգամ, հիմնականուն ուսումնական տըարվա սկզբին և ավարտին: Նման այցելությունների հիմնական նպատակը երեխաների ր նրանց ընտանիքների հետ ավելի մոտիկից ծանոթանալն է: Երբեմն թե մանկավարժները և թե ընտանիքի անդամները կաշկանդվում են տնային այցի գաղափարից: Ային դեպքում, երբ այցելությունն առաջարկվում և ընկալվում է՝ որպես բարեկամական այց, և պահպանվում են ընտանիքում պատշաճ համարվող վարվելակերպն ու ընդունված չափանիշները, այն հաջող ընթացք և արդյունք կունենա: Սովորաբար երեխաները մեծ խանդավառությամբ են ընդունում իրենց տուն եկած մանկավարժին: Ճիշտ կլինի որոշակի ժամանակ նախատեսել երեխայի սենյակ մտնելու և նրա խաղալիքների կամ տնային կենդանիների հետ ծանոթանալու համար:

Նման այցելությունները պետք է կազմակերպել ընտանիքին հարմար ժամանակ: Նախապես պետք է նշել այցելության նպատակի մասին, այլապես ընտանիքները կարող են մտավախություն ունենալ, որ նման այցը վատ լուրի հետ է կապված. Այդ իմաստով կարևոր է նշել, որ այցը պայմանավորված է երեխային և նրա ընտանիքը ավելի լավ ճանաչելու մղումով: Երեխայի նկարած պատկերը կամ մատեմատիկայի հանձնարարությունը տուն տանելու միջոցով կարելի է ընտանիքի անդամների հետ օգտակար զրույց ունենալ երեխայի ուսումնական հաջողությունների մասին:

Տնային այցելությունները օգտակար են ինչպես մանկավարժական կազմի, այնպես էլ ընտանիքների համար: Ծնողները հնարավորություն են ստանում քննարկելու երեխայի հետ կապված մտահոգությունները: Մանկավարժը կարող է հետաքրքիր տեղեկություններ հաղորդել ընտանիքին երեխայի մասին: Եթե երկու կողմերն էլ պարզորոշ ըմբռնում են այցելության նպատակը, նման ձեռնարկումները կարող են աստիճանաբար վերածվել բարեկամական շփումների՝ դրանով իսկ ապահովելով երեխայի և նրա ընտանիքի գործուն մասնակցությունը ծրագրին:

Ընտանիքի անդամները խմբասենյակում

Նախադպրոցական ուսումնառության գործընթացում ընտանիքի անդամների ներգրավումն ավելի մեծ ջանքեր է պահանջում քան մանկավարժական կազմի կողմից համապատասխան բովանդակությամբ հայտարարության կամ հրավերի փակցնելը ծնողական անկյունի ցուցատախտակին: Երեխայի տուն կատարած առաջին իսկ այցելության ժամանակ հարկ է ծնողների ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ ծրագրի հաջողությունը մեծապես կախված է մանկավարժական կազմի և ընտանիքի համագործակցությունից: Ընտանիքի անդամները պետք է քաջ գիտակցեն, որ իրենց մասնակցությունը ցանկալի է և անգնահատելի: Կարևոր է բացահայտել ընտանիքի անդամների հետաքրքրություններն ու հմտությունները և առաջարկել այն ուղիներն ու ձևերը, որոնցով նրանք կարող են իրենց արժեքավոր մասնակցությունը բերել մանկապարտեզում այս կամ այն միջոցառումների ընթացքում[9]:

Ի՞նչ են շահում ընտանիքները

Ընտանիքների մասնակցությունը վաղ տարիքի երեխաների կրթական ծրագրին արգասաբեր է մի շարք նկատառումներով: Խմբասենյակ հաճախող, ուսումնակրթական գործընթացին մասնակցող և տարբեր տեսակի կրթական միջոցառումներ անցկացնող ծնողները կամ ընտանիքի մյուս անդամները, շնորհիվ այդ իսկ մասնակցության, հնարավորություն են ստանում .

- ✓ իտակցելու սեփական ներդրման կարևորությունը
- ✓ սովորելու իրենց երեխաներին ընկալել մյուսների հետ փոխհարա-բերությունների համատեքստում,
- ✓ ավելի լավ հասկանալու երեխայի զարգացման փուլերը,
- ✓ հստակորեն ըմբռնելուև գնահատելու մանկավարժական կազմի նշանակությունը,
- ✓ հայտնաբերելու նոր խաղեր և միջոցառումներ, որոնք հաճելի կլիներ կազմակերպել տանը,
- ✓ ծանոթանալու իրենց երեխաների ընկերներին,

[9] Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008 էջ 114-120

✓ հաստատելու տևական բարեկամական հարաբերություններ մյուս ծնողների հետ:

Տղամարդկանց ներգրավումը

Որպես կանոն՝ մանկապարտեզում առաջին իսկ շփումները կատարվում են երեխաների մայրիկների հետ. հայրերը, պապիկները և արական սեռի մյուս բարեկամները մի տեսակ դուրս են մնում հաղորդակցության այս շրջանակից: Սակայն կարևոր է գործադրել ամեն ջանք՝ երեխաների կյանքում նշանակություն ունեցող տղամարդկանց ներգրավելու և երեխաների ուսուցմանը ցանկալի մասնակից դարձնելու ուղղությամբ: Ծրագրի սկզբից ևեթ հարկ է պլանավորել տնային այցեր, ծնողական ժողովներ, խորհրդակցություններ և այլ կարգի գործունեություն, ընդ որում այնպիսի ժամերի, երբ հայրերը նույնպես հնարավորություն կունենան մասնակցելու: Տղամարդկանց հարկավոր է ընդգրկել բոլոր քննարկումներում: Հարցեր տալ իրենց երեխաների մասին: Երկտողները և հրավերները ուղղել և մայրերին և հայրերին: Եթե անհրաժեշտ է, որ հաշվետվությունները ստորագրվեն, խնդրել, որ լինեն երկուսի ստորագրությունները: Դրանով իսկ մեկ անգամ ևս ընդգծում ենք հոր կարևորությունը:

Հայրիկներին մանկապարտեզային կյանք ներգրավելու նպատակով կարելի է՝

- տղամարդկանց հետաքրքրությունների կողմնորոշմամբ հատուկ միջոցառումներ կազմակերպել, հրավիրել երեխաներին և նրանց հայրերին կամ այլ նշանավոր տղամարդկանց՝ հենց իրենց համար կազմակերպված միջոցառումներին կամ գործունեությանը մասնակցելու,
- փորձել պարզել, թե տղամարդիկ ինչով կցանկանային աջակցել ծրագրին,
- խրախուսել երկու հայրիկների ներկայությունը խմբասենյակում կամ հանդիպումներին, որպեսզի նրանք սատարեն միմյանց,
- ծրագրել զուտ «տղամարդկային» միջոցառումներ ու հանդիպումներ, ուր նրանք կարող են փոխանակել իրենց մտքերն ու խոսել իրենց երեխաների մասին,

- հովանավորել ընտանեկան երեկույթներ և միջոցառումներ, որոնց երկու ծնողներն էլ հաճույքով կմասնակցեն,
- կազմակերպել սպորտային միջոցառումներ, որտեղ հայրիկները կմրցեն իրենց երեխաների համար՝ փորձելով լինել օգտակար, բերելով թիմին անհրաժեշտ միավորներ:

Գաղտնապահություն.

Գաղտնապահությունը կարելի է բնորոշել՝ որպես վստահության առկայության պայմաններում ընտանիքի անդամից ստացված տեղեկությունների պահպանում և դրանց հաղորդում մասնագետներին՝ միմիայն ընտանիքի շահերին համապատասխանող կարգով: Կարևոր է, որ մանկավարժական աշխատակազմի կողմից խրախուսվի բաց քննարկումները և ընտանիքներին հնարավորություն ընձեռնվի արտահայտվել իրենց հուզող թեմաների շուրջ: Սակայն, երբեմն ծնողները ստիպված են կոնֆիդենցիալ տեղեկություններ հայտնել երեխայի կամ ընտանիքում տիրող անբարենպաստ իրադրության մասին: Մանկավարժը պատասխանատու է ողջ կոնֆիդենցիալ տեղեկատվության համար, անկախ նրանից, թե ինչ ձևով է այն ստացվել՝ բանավոր, թե գրավոր: Նշված կարգի ինֆորմացիան այլ անձանց տրամադրելուց առաջ մանկավարժը պարտավոր է ստանալ ընտանիքի գրավոր թույլտվությունը: Ընտանիքի անդամներին անհրաժեշտ է հավաստիացնել, որ աշխատակազմը պահպանելու է բանավոր կամ գրավոր տեսքով ընտանիքի անդամներից ստացված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը[10]:

[10] Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008 էջ 114-120

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հիմնախնդրի շուրջ կատարած տեսական ուսումնասիրությունը հնարավորություն տվեցի եզրակացնել, որ երեխայի լիարժեք և համակողմանի զարգացման գործընթացում շատ կարևոր և պարտադիր է ընտանիքի համագործակցությունը մանկապարտեզի հետ: Դա ամենօրյա ջանք պահանջող աշխատանք է, որը պետք է կատարվի սիրով և հաճույքով, քանզի այն ուղղված է երեխային, նրա առողջության պահպանմանն ու դաստիարակությանը:

Հետազոտության ընթացքում ուսումասիրեցինք և գնահատեցինք ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության միջև գոյություն ունեցող համագործակցության ձևերը: Բազմաթիվ թեմատիկ զրույցների, մեթոդիկաների, մրցույթների և հանդիպումների միջոցով ապահովեցինք յուրաքանչյուր ծնողի ակտիվ ներգրավումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին: Մշակվեցին ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության այնպիսի միջոցներ, որոնք նպաստեցին ծնող–մանկապարտեզ կապի արդյունավետությանը: Ընտանիքի և մանկապարտեզի դաստիարակչական պահանջները, արգելքները պետք է իրար համապատասխանեն՝ լինեն փոխհամաձայնեցված:

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հիմնական առաջնորդը դաստիարակն է, ուստի կարևոր է, որ նա զինված լինի մասնագիտական և մանկավարժական անհրաժեշտ գիտելիքներով՝ երեխաներին մանկապարտեզ ընդունման, խմբից խումբ տեղափոխման, ինչպես նաև ծնողների հետ համագործակցության ճիշտ ձևերի ընտրության և գիտելիքների անուղղակի փոխանցման գործընթացների կազմակերպման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դաստիարակչական աշխատանքը դպրոցում, աշխ. խմբ. ղեկ. Մ. Դավթյան, Երևան, 2008
2. Методика воспитательной работы. Под редакцией В.А. Сластенина ,- М., 2002. էջ 91
3. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն, Երևան, 2005թ.
4. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008
5. Т . А . Маркова << Детский сад и семья>>, Москва, 1981